

բաս կուլի և նուր ուլ դէհը միրզաների և
Խապէր Սուլթան խանուով:

ՕԳ. Օհրա — Օէհրա խանուով,
քոյր Սաշաի Շիր — քուհիցի Նասիր
խանի, մայր Շափուր միրզի և Ֆարս —
Սուլթան խանուով. երկու որդիներն էլ
մեռած են:

ՕԿ. Նէնէ խանուով, քոյր Փէզլարի
Մահամմեդ — Մէհթի խանի, որի արտ-
ղոսնէր Շէհնէ, այս ինքն բանաստեղծ, ծը-
նաւ Թէյիուն խանուով և Իզզաթ —
Նըսա խանուով, և զնաց Մէքքէ ուխա:

ՕԼ. Իրի խանուով, դուստր Բալ-
Ֆրուշի շաջի Իւսուֆ խանի, մայր Շահ
— Սուլթան խանուով:

ՕՕ. շաջիէ — խաթուն խանուով,
դուստր Իսպահանցի լութֆ — Ալի բէկի,
մայր Շէմս Բանու խանուով:

ՕԻ. Խօշ — նմա խանուով, Արաս-
տանի կողմէն, մայր Մահ Բէգում խա-
նուով:

ՕԲ. Ֆաթի խանուով Շիրազցի, մայր
Սարվ — ջհան խանուով:

ՕԳ. Խէյր — Նըսա խանուով Բալ-
րասուհի, մայր Շահ — Ջհան խանուով
մահանուաներոյ խան Իրի:

Ա. Նէնէ խանուով մահանուանեալ
Մէհդուլեա՝ քոյր մօլայ Եբդուլլի, Մա-
զանդարանի Սար տեղիցն, մայր Քեամ-
րան Միրզի և Օվրանի — Օհր միրզի, և
Բէգմ — Երա խանուով, Խօռում — Բը-
հար խանուով, մին զաւակն էլ մեռել է:

ԱԸ. շումա — խանուով, Ջհանբէկ-
լու Քուրդ ցեղէն, մայր Ջէլալէգզին
միրզի:

ԱԹ. Բէգում խանուով, դուստր Թէհ-
րանի մօտիկ Թէջրիշ գեղացի շաջի Լ-

լեասի, մայր Փէրվիզ միրզի, երկու զա-
ւակներն էլ մեռած են:

ԱԿ. Մահ — Մէրին խանուով, դուս-
տր Շիրազցի Գիւլ — Մահամմեդ խա-
նի, մայր Օքհէյդա խանուով:

ԱԿ. Շահ — Ֆրազ խանուով, Քիւրդ
Բալրաս ցեղէն, մայր Աղայ Բէգում:

ԱԼ. Գիւլի խանուով, հոջակեալ արտ-
ղոսնէն Ալադեօզ, Աարաբաղցի, մայր
Սուլթան շիւսէյն միրզի:

ԱՕ. Մալաք — Ջհան խանուով, Շի-
րազցի, մայր Բօխսարէ Բէգում խանուով:

ԱԶ. Շահբազ խանուով, Ազգինցի,
մայր Մովուդ — Սուլթան խանուով:

ԱԲ. Ալադեօզ խանուով, Բասթամցի,
մայր Սհար — կրան միրզայի:

ԱԹ. Շահր — Բանու խանուով, Խու-
ղարանդու ցեղէն, մայր Ալիէ — Սուլթան
խանուով:

(Ի յեղ-է-յ-)

ԳԱՐՈՒՍ ՇԻՐՄԱԶՆԵԱՆՏ

ԲԱՐՈՅԱԿԱՆ

ՓՈՒՆՁԻ Ի ՄԱՏԵՆԵԿՐՈՒԹԵԱՆՑ-

(Ն-ր-ն-է-ն-է-ն-)

Յարաբէ երկի.

Երկիրն ունի զձեւ բոլորակ, ուստի
եւ անուանի Երկրագունան:

Երկիրն անհասանելի արագութեամբ
յրնթացս քսան եւ չորս ժամուց շուրջ
ածելով, զծագումն եւ զմուտ արեգա-
կան ոչ թողու երկրայելի:

Բոլորակութիւն երկրի ամենահա-
ւաստի յայտնի յըստուերէ իւրմէ ի
խաւարումն լրացեալ լուսնոյ, ի նաւա-
գնացութենէ շուրջ զերկրաւ, ի մտից
եւ յիւից արեգական:

Երկրագունտն բաժանեալ է ի ցամաք
եւ ի ծով:

Մասն ջրոյ բազմիցս մեծ է քան
զերկրի, որպէս աշխարհացոյցք աշխար-
հագրութեանց աներկբայ ապացուցա-
նեն մեզ:

Երկիրն անձրեւօք, որ յամպոց ի
ձեռն օգոյ անախ աստ ըստ յաջողակ
հողմոց երագութեան թօթափին, ո-
ւռգեալ, բարձեալ բերէ մեզ զճառս,
զճաղիկս, զբոյսս եւ զայլ ազգի ազգի
զպտուղս:

Երկիրն, որ այգոյ պատշաճաւոր է,
նա եւ ծառայ է օգտակար:

Ծառք մեզ եւ կառուցման տանց եւ
սննդեան հրոյ, եւ զանազան առնելի
գործեաց ծառայեն:

Ի միջի ծառոց ոմանք հանապազորդ
կանային, ոմանք ի ձմերան մերկանան
գտերեւս իւրեանց եւ ի ժամանակի
գարնան ծաղկին:

Բովանդակ ծառք բաժանին յերիս
մասուենս, յարմատ, յոստ եւ ի ճիւղ:

Ընձիւղք ոմանց ծառոց յաշնան իսկ
եւ իսկ զրկին կամ մերկանան ի սաղար-
թից, սակայն ոմանք զամն ողջոյն կա-
նային, որ գոն եղեւին, եղեւնափայտ
եւ այլն:

Մեծամեծ ծառք անրնդհատ աճին,
եւ ի միում ժամու արմատաքի խնն:

Ոմանք ի ծառոց գեղուղէշ ծաղկին,
սակայն զոչինչ բերեն զպտուղս. նմանա-

պէս ընդունակութիւն ոմանց մանկանց
խոստանայ ի կեանս զբազում պտուղս,
այսոքիկ զոյգ ընդ սմին երինոսարդա-
նան, ընկղմելով ի վատթար հոգս զա-
կրնկալութիւն պատրեն բազմաց:

Յանտառի սնանին բազում գաղանք,
որոց մտրթովք եւ կաշեօք պատսպարին
մարդիկ:

Զարմանալի ծաղիկք են զանազանք,
ոմանք գեղեցկապէս զմայլեցուցանեն
զայս, ոմանք հոտիւք պարարեն զքիմս,
իսկ այլք ծառայեն մարդկան առող-
ջութեան:

Յամենայն տնկոց, որովք զարդարի
երկիր, պիտանայուք եւ օգտակարք,
հանապազորդ հարկաւորք ըստ մեծի
մասին են հաճար, ցորեան, գարի եւ
վարսակ, յորոց զանազան ազգք հացից
եւ ազգի ազգի կերակուրք հանդերձին-
վուշն, զորս փոխարկեն ի քուղ, տայ
մեզ զպատտառ եւ զբաթան, առսմանք
եւ ազաւանդակք ի նմանէ ոլորին:

Զխստորն ի թիւս աստուածոց ունին
Եգիպտացիք:

Բարւոք հերքեալ երկիրն միայն նա-
խընծայէ զպտուղս. հարկ է զի նա ի
շինականաց լաւապէս ազբեսցի ազբե-
ւօք, արօրեսցի արօրաւ, հարթեսցի տա-
փանաւ եւ ապա սերմամբ սերմանեսցի:

Գաշտն ոչ միանգամ հերկի, այլ
կրկնակի, որպէս զի կարասցէ բերել
զմեծամեծ բերս կարկառաւիս:

Գաշտն, որ զբազում ամս գաղարի ի
հերկելոյ, բերէ զառատ զպտուղս: Վասն
քո հերկես, վասն քո տափես, վասն քո
սերմանես եւ վասն քո զայնոսիկ հնձես:

Սերմունք սարդենւոյն այնքան փոք-

րիկ են, մինչ զայնոսիկ ոչ զօրեն աչք տեսանել:

Որպէս թուղն ոչ ծաղկի, բայց ունի զամենաքաղցր պտուղս, սապէս եւ մեր ոչ խոստամաք բարեգործեմք:

Որպէս ձիթենին անագան ածի, բայց զգերազանց ունի զպտուղս. ուռն վաղ-վաղակի զօրանայ՝ բայց է անպտուղ. նմանապէս են եւ վաղահաս միտքն:

Որպէս ի նիւթական բնութեան, որք բարեպատեհ միջոցաւ ծաղկին վաղ-վաղակի հասունանան, որպիսի են վարդըն՝ շուշան եւ մանուշակն, նմանապէս եւ ի կեանս մարդկան, որք ծաղկեալ են՝ ի ճերութիւն խոնարհին եւ կորնչին:

Ի վերայ երկրի լերինք բլուրք եւ ծործորք տեսանին:

Գլխաւորագոյն ի լերանց են, Հիմալայն ի Հնդիկ, Փերուիայն յԱմերիքայ, Ալփէոսն ի Նելլեցիայ, Փերենայն՝ որ զԳաղղիայն բաժանէ յԻսպանիոյ, եւ Կովկասն ի Ռուսաստան, եւլն:

Զօրք Աղէքսանդրի Մակեդոնացւոյ յընթացս եօթանասուն աւուրց տիրեցին Կովկասու:

Ոսկին, արծաթ, կապար, եւ երկաթ նմանապէս են մետաղք, որք զմեծագոյն օգուտ մարդկան նախընծայեն:

Զկիրառութիւնս ոսկւոյ եւ արծաթոյ իբր գնիւթ ամենայն չարագործութեանց Արիւրկոսն հալածեաց ի Վահեղեմանացւոց:

Որպէս ոսկին հրով՝ նմանապէս եւ առաքինութիւնք զանազան փորձութեամբք փորձիլ կարեն:

Վաճառականաց հարկաւորին դրամք, որք յոսկւոյ եւ յարծաթոյ հատանին:

երկրագործք հերկեն զերկիր միայն խաքով, զոր գարբինն վասն նոցա կազմէ յերկաթոյ:

Երկաթն է կարի հարկաւորագոյն նիւթ՝ վասն հերկելոյ զգաշտս:

Երկաթն թէպէտ՝ գլխաւորին է քան զամենայն մետաղս, սակայն պիտանաւորութեամբ միշտ տիեզերաց՝ այլոց ամենեցունց յաղթէ:

Մնդիկն ուտէ եւ պատառէ զամանիւր:

Բոլոր մետաղք կապարի, երկաթոյ, պղնձոյ, արծաթոյ, եւ ոսկւոյ գրեթէ յԻսպանիոյ բղխին:

Յապագա Ըրոյ:

Զուրն է հեղեղուկ եւ թափանձիկ քան զամենայն նիւթս որք գտանին յեզերս, եւ այսպէս Արեգակն, Լուսին, եւ աստեղք իբր ի հայելուջ երեւին ի նմա:

Մաքուր ջուրն ոչ զճաշակ ունի եւ ոչ զգոյն:

Յովն կարմիր գունով զանազանի յայլոց:

Գագաթք բարձրագոյն լիրանց, նա եւ ի ջերմագոյն գաւառն, ձեամբք եւ սառուցօք մշտապէս ծածկեալ են:

Են ոմանք ի լերանց, որք ի ժամանակս մեծագոյն երկրաշարժութեան ի դուրս մղեն զհուրս, զճուրիս, զքարինս, զաւաղս եւ զայլ նիւթս եւ հրաբուրիս անուանին, յորոց գլխաւորագոյն են Ետնայ ի Սիկիլիայ, եւ Վէսուղ ի գաւառն Նէսպօլսոյ:

Երբեմն քանի մի մերձաւոր գաւառք Եանեան հրոյ խաւարաւ ծածկեալ ա-

սին, մինչ յընթացս երկուց աւուրց
այր զնկեր ոչ ճանաչէր:

Լերինք Յանեան զբաղում գարս ի
կիզման կան:

Յոտորտից լերանց աւուք եւ աղ-
բիւրք բղխին:

Յերակս լերանց թանկագին քարինք
եւ մետաղք ծածկեալ կան:

Թէպէտ թանկագին քարինք մեծա-
գընոյ վաճառին, սակայն ոչ են այնքան
հարկաւորագոյն եւ օգտակարք, զի
զնոսա մարգիկ ունել ոչ զօրեն:

Թանկագին քարինք են Ադամանգ,
Զմրուխտ, Նախիւղայ, Տպազիտն, որոց
կարի փոքրագոյն քարն հարկաւորու-
թեամբ եւ պիտանաւորութեամբ զմե-
ծագունիւք գերազանցէ:

Թէպէտ թանկագին է քարինք ան-
կանին ի տիղմ, ոչ կորուսանեն զիւրեանց
զյատկութիւն, սակէս եւ բաղումք ի
խաւարի ծածկին, այլ զգեղեցիկ զիւր-
եանց ոչ կորուսանեն զունակութիւն:

Զոսկին, զարծաթ, զպղինձ, եւ զեր-
կաթ իզուր պաշտէ բնութիւնն եթէ
ոչ ուսուցէ հնարիւք հասու լինել
եղանակաց նորին:

Ի ժամանակս ձմերան դառնաշունչ
եւ ձենձերիչ մակերեւոյթք կամ երեսք
ջրոյ այնքան նուազիւ եւ ձակիւ, մինչեւ
շրջել ի վերայ սառուցից ոչ միայն մար-
գիկ, այլ եւ կենդանիք ծանրաբե-
ռինք մարմնով. նա եւ զծանրագու-
նեղ բեռինս բեռնաւորեալս անընկրղ-
մելի պահել զօրէ:

Ոչ ոք կենդանի ոչ եւս տունիք զօրեն
կեալ առանց ջրոյ. այս ջուրն մարգ-
կան եւ անասնոց զբնակիլս բաշխէ, եւ

զայլ եւ այլ մեծամեծ մեքենայս խա-
ղացուցանէ:

Ոմանք յառուակաց բղխեն զսառն
ջուր, ոմանք զջերմ՝ այլ թխու եւ
տախպ, ոմանք զդառն եւ զզանազան
ցաւս մարգկան գեղեցկապէս բժշկեն,
եւ ի նախկին առողջութիւն վերա-
ծեն:

Ի գաւառին Ներիխոնդայ է լճակ, որ
վասն անշարժութեան ջուրց Մեռեալ
Ծով անուանի:

Առ տաճարն Համմոնայ է աղբիւր ի
տունջեան սառն, ջերմ ի գիշերային
ժամանակի:

Յանդիման Տիմաւայ գետոյն է փոք-
րիկ կղզի ի ծովի հանդերձ ջերմա-
գոյն աղբերք, որք ի ժամանակս շար-
ժութեան ծովու առաւելուն եւ նը-
ւաղին:

Գտանի աղբիւր ի Սպանիա որ դոս-
կեգոյն ցուցանէ զձկունս ոչ տարբերք
յիրերաց ի ջուրս:

Առատութիւն ջուրց բազմութեան
անուանի ծով, որք զցամաք երկրաւ շր-
ջապատեալ Ովկիանոս անուանի, որ
զամենայն գետս ըմպէ եւ ոչ երբէք
արտաքս հանէ:

Նաւալարք ի վերայ ամենայն ծովուց
գնան:

Ամենայն ծովային ջուրք այնքան
աղի եւ դառահամ են, մինչ ոչ ինչ
հնարիւք զայնս կարեն կենդանիք բնդ-
հանուր աշխարհի ի գործ դնել:

Աղն զջուրս ծովու այնքան պնդա-
կազմ առնէ, եւ բաղմիցս այնքան յար-
մարաւոր վասն կազմութեան մեծամեծ
բեռանց, որպիսի են նաւք, զորս ի

ձեռն ծովու զօրութեամբ բռնութեան
հոգևոյ տանին:

Մահնթացութիւն ծովուց երկիցս պա-
տահի նմա յընթացս երկոտասան ժա-
մուց:

Բազմաթիւ ազբիւրք բղխին ի ժայ-
ռից եւ ի լեռանց:

Գեան ի սաստիկ արագութենէ: որով
հոսի՝ ընկալեալ է զանուն Տիգրիսայ-
քանդի լեզուաւ Պարսից Տիգրիս նեա
անուանի:

Գեան Յորգանան ի բազում առա-
ջրս բաժանի եւ ի ծով անդր հոսի:

Ձուրն որպէս զերկիր ունի ինքեան
զբնակիչս որպէս են ձկունք:

Ի տեղի ոսից ձկանց տուեալ են փե-
տուրք: որոց միջնորդութեամբ ի ջուրս
լուղան: ծածկեալ գոլով թեփովք ա-
ծեն զփոքրիկ ձուս: ուստի երանեն ման-
րիկ ձկունք: որք իսկոյն լողան ի ջուրս
եւ գտանեն զօգտակարն ինքեանց զկե-
րակուր:

Այ ինչ կենդանի է բազմածին քան
զձկունս: զորս ամենահաւաստի ապա-
ցուցանեն տարեղք: որոց անհաւատալի
բազմութիւնք ի զանազան գաւառաց
հիւսիտային ազգաց որսացեալ լինին
եւ ոչ երբէք կարեն նուազեցուցանել:

(Ի յե-+չ-) .

ՄՇԱԿԻ ՎԵՐԱԳԱՐՁԸ Ի ԹԻՒՆ 16.

Արշակ. Ի արեաւ ձեզ սիրելի Արամ.
երկի սրտեղ էիք, ես ձեզ շատ պտրտեցի,
որ մի նոր բան պատմեմ. զիտեմ որ զուք

շատ սիրուիք այսպիսի նոր բաներ լսել եւ
խմանալը:

Արամ. Ի՞նչ կայ սիրելի, ասն խնդրեմ:

Արշակ. Այս քանի օրուան Մշակը
կարդացել ես թէ սչ:

Արամ. Սաստիկ զբազուած էի գործով՝
չկարողացի կարդալ:

Արշակ. Ափսոս որ չես կարդացել, ես
նորա մէջ կարդացի մի քանի հրաշալի
յօդուածներ մանաւանդ « Ա իրագառ-
նանքը », հաւատացիր, որ ես իմ կեան-
քիս մէջ մի այդպիսի ազատ եւ նուրբ
մտքով յօդուած ամենեւին զեւ չեմ
տեսել:

Արամ. Ի՞նչ էր նիւթը:

Արշակ. Չես իմանում, ի՞նչ կլինի, էլի
մեր հոգեօրականութեան վերայ էր խօսում:
Նշմարիտ ասած մեր հոգեօրականու-
թեան զեւ շատ քիչ է այդպիսի յան-
դիմանութիւնները:

Արամ. Այժմ քեզ մօտ Մշակ ունի՞ս,
խնդրեմ տուր կարդամ: (Անում է
Մշակը եւ կարդում, եւ ապա խոր հա-
ւաչում):

Արշակ. Ի՞նչի համար ես այդպէս խոր
հաւաչում. կարծեմ քեզ փրայ մեծ
ներգործութիւն ունեցաւ այդ զբուածքը:

Արամ. Ի հարկէ շատ մեծ ազդեցու-
թիւն ունեցաւ ինձ վերայ այդ յօդուածը,
որովհետեւ Մշակը փոխանակ շինութեան՝
կործանման է աշխատում:

Արշակ. Ի՞նչ ես ասում:

Արամ. Ի՞նչ եմ ասում, դէ լսիր:—Մի-
ընդի՝ կարծեմ եւ դու կվկայես, որ դու շատ
թոյլ ես ուսման մէջ. ի հարկէ եթէ տե-
ղեկութիւն ունենայիր մեր ազգի հին եւ նոր
կեանքից, եթէ ունենայիր փոքր ինչ ու-